ԵԴ2/27816/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 սեպտեմբերի 2023թ. **ք.Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանս /այսուհետ՝ դատարան/, ծանոթանալով <<Փրոմոուշն>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության՝ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության 14.08.2023թ-ին հայտարարված <<ՀՍՖ-ԲՄԽԾՁԲ-23/1>> ծածկագրով նախարակավորման ընթացակարգի հայտարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Փրոմոուշն>> ՍՊ ընկերության տնօրեն Հայկ Հովհաննիսյանը 2023թ. օգոստոսի 28-ին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության՝ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության 14.08.2023թ-ին հայտարարված <<ՀՍՖ-ԲՄԽԾՁԲ-23/1>> ծածկագրով նախարակավորման ընթացակարգի հայտարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ. օգոստոսի 31-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200 և 361 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Փրոմոուշն>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության՝ <<Հայաստանի Սամբոյի Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության 14.08.2023թ-ին հայտարարված <<ՀՍՖ-ԲՄԽԾՁԲ-23/1>> ծածկագրով նախարակավորման ընթացակարգի հայտարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YESOYAN YEREM 2711740048 Date: 2023.09.05 **ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ**